ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ պաշտպանության նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար համակարգչային սարքեր, սարքավորումներ եվ օժանդակ միջոցներիի ձեռքբերման նպատակով կազմակերպված N ԳՀԱՊԲՁԲ-1/2-15 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի մայիսի 25-ին կնքված N ԳՀԱՊԲՁԲ-1/2-15 պայմանագրում 2018 թվականի օգոստոսի 8-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1 «ՌԵՏՐՈ ՖԻԼԻՆԳԱ» ՍՊԸ-ի կամահայտնությունը:

Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին փոփոխելություն կատարել Պայմանագրի 3.1 կետում, հետևյալ բովանդակությամբ՝ Պայմանագրի գինը կազմում է 2 549 000 (երկու միլիոն հինգ հարյուր քառասունինը հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով: Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

Փոփոխության հիմնավորում. 2018թ. մայիսի 25-ին կնքված գնման պայմանագրի 8.6 կետը.

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության բաժնի առաջատար մասնագետ Վ. Սահականին:

Հեռախոս՝ 010-29-43-53:

Էլ. փոստ՝ *v.sahakyan@mil.am:*

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1
N ԳՀԱՊԲՁԲ-1/2-15 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 08.08.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Գնորդ, մի կողմից և «ՌԵՏՐՈ ՖԻԼԻՆԳՍ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Գրիգորյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 25.05.2018թ. կնքված N ԳՀԱՊԲՁԲ-1/2-15 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.6 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Վաճառողի կողմից ներկայացրած գնային առաջարկն առանց ԱԱՀ-ի է, իսկ Պայմանագրի 3.1 կետում տեխնիկական վրիպակի արդյունքում Պայմանագրի գինը սահմանվել է «ներառյալ ԱԱՀ»՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել փոփոխություն և Պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«3.1 Պայմանագրի գինը կազմում է 2 549 000 (երկու միլիոն հինգ հարյուր քառասունինը հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը»:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքների մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՌԵՏՐՈ ՖԻԼԻՆԳՍ» ՍՊԸ
ք. Երևան Բաղրամյան 5/Ա	ՀՀ, ք. Երևան, Անտառային փողոց 120տ.
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 90001144079	Հ/Հ 16076012101400
ՀՎՀՀ 02522157	ՎՀՀ 00125777
ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ	ՏՆՕՐԵՆ
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ